ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(Աղվերան, 3 հուլիսի, 2025 թ.)

Գերաշնո՛րհ Սրբազան Հայրեր,

Հոգեշնո՛րհ եւ արժանապատիվ հոգեւոր հայրեր,

Սիրելի՛ զավակներ Մեր,

Հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ սերն ենք բերում ձեզ ամենքիդ։

Մեծապես ուրախ ենք, որ Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միության հիմնադրման 25-ամյակի առիթով աշխարհի տարբեր կողմերից հայորդիներդ հոգեւոր առաջնորդների հետ համախմբվել եք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո հայրենի մեր երկրում՝ զորացնելու հավատքն առ Աստված եւ նվիրումը առ հայրենին, վերանորոգելու ձեր սերն ու նախանձախնդրությունը հանդեպ մեր Սուրբ Եկեղեցին եւ ազգային ու հոգեւոր մեր արժեքները։

Դեռեւս 2001 թ. քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի շրջանակներում ստեղծվեց Եկեղեցասեր երիտասարդաց գրասենյակը, որը հետագայում հիմքը դարձավ Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդական միության ձեւավորման։ Գնահատելի է այս տարիներին Միության հետեւողական աշխատանքը թեմական երիտասարդական կազմակերպությունների համախմբման եւ գործունեության համակարգման ուղղությամբ։ Գովելի է, որ շարունակվում են ջանքերը մեծացնելու երիտասարդների ներգրավվածությունը ազգային ու եկեղեցական անդաստանում, ինչպես նաեւ հոգեւոր կրթական ծրագրերով զորացնելու նրանց կրոնական իմացությունը։

Սիրասո՛ւն զավակներ Մեր, որտեղ էլ լինի՝ թե՛ Հայաստանում, եւ թե՛ սփյուռքում, հոգեւոր ու ազգային արժեհամակարգի պահպանությամբ ու դրան հավատարմությամբ է միայն հնարավոր հայ լինել, մնալ արժանավոր զավակը ազգի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու։ Այս կառույցին եւ թեմերին կից երիտասարդական կազմակերպություններին անդամակցելով՝ հայորդիները առավել զորանում են Աստվածասիրությամբ ու հայրենանվիրումով, պատրաստ լինում գովարժան հանձնառությունների մեր հավատքի, մշակույթի ու լեզվի պահպանության, այլեւ ազգային անդաստանում կարեւոր դերակատարության։

Ինչպես գիտեք, այս օրերին մեր հայրենիքը դիմագրավում է անվտանգային սպառնալիքներ։ Հարազատ հողից բռնի տեղահանված արցախահայությունը դիմակայում է անասելի դժվարությունների, մտահոգիչ է ներհասարակական ծայրաստիճան պառակտվածությունը, Հայաստանի իշխանությունների կողմից Հայ Եկեղեցու դեմ սանձազերծված քաղաքական արշավը, որի շրջանակներում կալանավորվեցին Միքայել եւ Բագրատ արքեպիսկոպոսները, ազգային բարերար տիար Սամվել Կարապետյանը։ Առկա մարտահրավերների հանդիման հրամայական է միասնական լինել եւ նախանձախնդիր՝ օրինականության պաշտպանության գործում, թույլ չտալ մեր Սուրբ Եկեղեցու հեղինակազրկումն ու նսեմացումը։ Մեր բարդ ժամանակներում անհրաժեշտ է ամուր պահել հավատքը, ազգանվիրումն ու եկեղեցանվիրումը։ Ով, եթե ոչ մենք՝ հոգեւորականներ եւ մեր հավատավոր զավակներ, որ միասնաբար կազմում ենք Սուրբ Եկեղեցին, պիտի ջանքեր ներդնենք, որպեսզի մեր կյանքում, հայրենական անդաստանում հաղթանակեն սերը, արդարությունը եւ ճշմարտությունը, կամայականությունների եւ ապօրինությունների հանդեպ գերակայեն օրենքն ու իրավունքը, եւ մեր ժողովուրդը ապրի անխռով ու միաբան։ Սիրելի՛ պատանիներ եւ օրիորդներ, դուք մեր ժողովրդի ապագան եք, գրավականը հայոց հարատեւության, մեր պատմության շարունակականության։ Երիտասարդների հոգեւոր խնամատարությունը մեր Սուրբ Եկեղեցու կարեւորագույն առաքելություններից է՝ նոր սերնդին առաջնորդելու ավետարանական պատվիրաններով, ամրապնդելու ազգային ոգին ու գիտակցությունը եւ հաստատուն պահելու բարեպաշտության ուղիներում՝ ըստ սուրբգրային խոսքի. «Երիտասարդն ինչ միջոցով ուղղի ճանապարհն իր, եթե ոչ Քո խոսքերը պահելով» (Սաղմ. ՃԺԸ. 9)։ Այստեղ ձեր քաջալերող ներկայությունը գովելի

արդյունքն է այդ բարեբեր աշխատանքի։ Մեր ժամանակներում երիտասարդությունը կանգնած է բազում հոգեւոր-բարոյական մարտահրավերների, աշխարհայնացման ու աշխարհիկացման երեւույթների առջեւ, երբ տարատեսակ գրավչություններ են հրամցվում երիտասարդներին հաճախ միտումնավոր՝ հեռացնելու համար ազգային ավանդույթներից, նախնյաց ժառանգությունից ու նվիրական արժեքներից։ Իբրեւ Եկեղեցու հովանու ներքո հասակ առած, ազգասիրությամբ սնված հայորդիներ՝ պաշտպա՛նը եղեք մեր սրբությունների, գործո՛ւն մասնակցություն բերեք ձեր թեմական եւ համայնքային կյանքին, լծվե՛ք ազգային ու եկեղեցական անդաստանի շինության ու առաջընթացի գործին։

Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միության հիմնադրման 25-ամյակի առիթով Մենք վերստին Մեր գնահատանքն ենք բերում այս նվիրական կառույցի հոգեւոր առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին, ով Միության հիմնադրման առաջին իսկ օրվանից մեծ ներդրում ունի այս կառույցի գործունեության արդյունավորման մեջ։ Մեր գնահատանքն ենք բերում նաեւ Միության հոգեւոր տեսուչ եւ կենտրոնական գրասենյակի տնօրեն Հոգեշնորհ Տ. Թովմա վարդապետ Խաչատրյանին եւ կառույցի բոլոր նվիրյալ աշխատակիցներին։ Մեր օրհնությունն ենք բերում այստեղ ներկա թեմակալներին, հոգեւոր հովիվներին՝ երիտասարդների հանդեպ դրսեւորվող առանձնահատուկ հոգատարության համար։

Աղոթում ենք առ Բարերարն Աստված, որ առատապես օրհնի ամենքիդ եւ նորանոր ձեռքբերումներ պարգեւի Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միությանը՝ ի պայծառություն մեր Սուրբ Եկեղեցու եւ ի բարօրություն Քրիստոսասեր մեր ժողովրդի։

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերը եւ խաղաղությունը լինեն ձեզ ամենքիդ հետ այսօր եւ միշտ. ամեն։